

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

13 մայիսի 2013 թվական

գ. Հարթաշեն

Համաձայն ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հարթաշեն համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 26 կարգադրության, աշխատանքային խումբը մասնակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանի (խմբի ղեկավար), Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Զարիկ Մուրադյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Լյովա Հակոբյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ Արթուր Գրիգորյանի, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Հարթաշեն համայնքի ղեկավար Գրիշա Գալստյանի, Հարթաշեն համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի ապրիլի 1-ից մինչև 2013 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի ապրիլի 25-ին և ավարտվել՝ 2013 թվականի մայիսի 2-ին:

**Վարչական հսկողության արդյունքում պարզվել է հետևյալը.**

1) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, համայնքի ավագանին ընդունել է իր կանոնակարգը (29.11.2012թ. արձ. թիվ 7, որոշում թիվ 7-Ն).

2) Համայնքի ավագանու կողմից հաստատված (12.01.2009թ. արձ. թիվ 1) 2009-2012թթ. սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը կազմված է թերություններով՝ ֆինանսավորման աղբյուրները, աշխատանքների ծավալները, կատարման կոնկրետ ժամկետներն ու պատասխանատուները նշված չեն: Նրանում ընդգրկված ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքներ չնայած կատարվել են, սակայն այժմ դրանք դարձյալ գտնվում են ոչ բարվոք վիճակում, խմելու ջրի ջրագծի վերանորոգման աշխատանքներ